Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Ի՞նչ են էկոպիտակները ?

Տեղեկատվություն արտադրողների համար

Պիտակներ, որոնք օգնում են սպառողներին ընտրել հատուկ բնապահպանական և սոցիալական չափանիշներին համապատասխանող ապրանքներ և ծառայություններ:

Գործիքներ, որոնք պաշտպանում են շրջակա միջավայրը և միևնույն ժամանակ օգնում են իրենց ապրանքներով կամ ծառայություններով տարբերվել մրցակիցներից:

Գովազդման միջոցներ, որոնք խթանում են ապրանքների և ծառայությունների վաճառքը:

Շուկայական գործիքներ, որոնք կամընտրական են:

Գիտեի՞ք, որ... ?

Վերջին 6 տարիների ընթացքում[1] էկոլոգիապես մաքուր շուկայական ապրանքների վաճառքն աճել է երկու անգամ ավելի արագ, քան սովորական ապրանքներինը:
Գոյություն ունի տնտեսական մոդել՝ աճող սպառողական հատվածին, ներառյալ երիտասարդ սերնդին, ավելի շատ էկոլոգիապես մաքուր ապրանքներ եւ ծառայություններ առաջարկելու համար:

25 երկրներում վերջերս անցկացված հարցման արդյունքում հարցվածների 64%-ը նշել է, որ կցանկանային նվազեցնել իրենց անձնական ազդեցությունը շրջակա միջավայրի եւ բնության վրա, իսկ 44%-ը իրենց ներկայիս ազդեցության համար մեղավոր էին զգում[2]:

Սպառողների նախապատվությունը փոխվում է ամբողջ աշխարհում, ոչ միայն զարգացած շուկաներում, նոր ձեւավորվող կամ զարգացող շուկաներում հարցվածների ավելի քան 35% (զարգացած շուկաներում հարցվածների 28%-ի համեմատ) նշել է, որ նրանք գնում են էկոլոգիապես մաքուր արտադրանք[3]:

ԵՄ-ի Արեւելյան գործընկերության տարածաշրջանում միայն Ուկրաինան ունի I տիպի էկոպիտակ՝ «GREEN CRANE», որը շնորհվում է անկախ հասարակական կազմակերպության կողմից[4]: Մոլդովան նույնպես ազգային էկոպիտակ է մշակում:

[1] **Sustainable Market Share Index**. Center for Sustainable Business, 2021.
[2] **GlobeScan**, 2022.
[3] **Euromonitor International**, 2021.
[4] **Green Crane Ecolabel**, n.d.

Design: Zoi Environment Network

www.eu4environment.org

© 2022 ՄԱԿ ՇՄԾ. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Արտոնվել է Եվրամիությանը որոշակի պայմաններով

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Էկոպիտակների տարբեր տեսակները ?

Տեղեկատվություն արտադրողների համար

Պիտակների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ և դրանց կիրառումը շրջակա միջավայրի պահպանության առաջատար պրակտիկայում

	Էկոպիտակ Տիպ I	Հավաստագրման սխեմա կամ էկոլոգիապես մաքուր պիտակ Տիպ I-նման	Ինքնահայտարարագիր Տիպ II	Բնապահպանական արտադրանքի հայտարարարագիր Տիպ III
ԻՍՕ հղում	ISO 14024		ISO 14021	ISO 14025
Ստուգված է երրորդ կողմի կողմից	✓	✓	Չի պահանջվում, բայց խորհուրդ է տրվում	✓
Կյանքի շրջափուլից կախված	✓	✓	Հազվադեպ	Որպես կանոն
Բնապահպանական ուղղվածություն	Բնապահպանական (և սոցիալական) չափանիշների ամբողջ փաթեթ	Կոնկրետ բնապահպանական ազդեցություն	Կոնկրետ բնապահպանական ազդեցություն	Ընդհանուր ազդեցություն (հաճախ ցուցադրվում է աղյուսակի տեսքով)
Արպրանքների միջև համեմատելիության հնարավորություն	Երբեմն	Երբեմն	---	Որպես կանոն
Ներկայացման եղանակ	Կնիք կամ պիտակ	Կնիք կամ պիտակ	Հայտարարագիր, երբեմն կնիքով կամ գրաֆիկական տարրով	Ապրանքի էկոլոգիական հայտարարագիր
Ներկայացման տեսակ	Ձեռնարկություն-սպառող	Ձեռնարկություն-սպառող	Ձեռնարկություն-սպառող	Ձեռնարկություն-ձեռն արկություն

Արտադրանքի **կյանքի ցիկլ**

www.eu4environment.org

© 2022 ՄԱԿ ՇՄԾ. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Արտոնվել է Եվրամիությանը որոշակի պայմաններով:

Design: Zoi Environment Network

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Որո՞նք են **էկոպիտակների** առավելությունները ?

Տեղեկատվություն արտադրողների համար



Էկոպիտակներն օգնում են ընկերություններին՝

Բարձրացնել մրցունակությունը

- Օգտվելով էկոլոգիապես մաքուր ապրանքների և ծառայությունների նկատմամբ սպառողների աճող պահանջարկից
- Բացելով նոր կամ ընդլայնելով արդեն իսկ գոյություն ունեցող շուկաները (ներքին և միջազգային)
- Բարելավելով կայուն պետական գնումների հասանելիությունը

Հիմնել երկարաժամկետ կայուն, արդյունավետ արտադրություն՝
նախնական ներդրումներ կատարելուց հետո

- Կրճատելով ռեսուրսների օգտագործումը
- Չափելով արդյունավետությունը՝ հետագայում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով



Խթանել կայուն («կանաչ») ապրանքանիշով **արտադրանքը**, որն առանձնանում է և ձեռք է բերում սպառողների վստահությունը

Բարելավել նրանց հեղինակությունը բնապահպանության և կայուն զարգացման ոլորտում

Սպառողների համար ապահովել հուսալի չափանիշ՝
նվազագույն ջանքերով **էկոլոգիապես մաքուր արտադրանք ընտրելու համար**

Էկոպիտակների **ազդեցությունը** շրջակա միջավայրի վրա[1]

Տարեկան **21 000** տոննա CO2 արտանետումների խնայողությունները կարելի է վերագրել Նոր Զելանդիայում ECNZ-ի կողմից արտոնագրված զուգարանի թղթի վաճառքին (որը համարժեք է Փարիզից Նյու Յորք ինքնաթիռով երկկողմանի 21 ուղևորությունների):

Չինաստանի բնապահպանական պիտակավորման ծրագրով հավաստագրված տպիչով բազմաֆունկցիոնալ սարքերի վաճառքի և օգտագործման շնորհիվ 2018 թվականին Չինաստանում հնարավոր է եղել խնայել գրեթե **10 մլրդ կՎտ/ժ** էլեկտրաէներգիա

Ընդկաստանում «GreenPro» պիտակով ցեմենտի և բետոնի օգտագործումը հանգեցրել է տարեկան ջերմոցային գազերի արտանետումների գրեթե **6,5** մլն տոննայով կրճատմանը:

[1] Measuring the Performance of Ecolabels. Global Ecolabelling Network, 2019.

www.eu4environment.org

© 2022 ՄԱԿ ՇՄԾ. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Արտոնվել է Եվրամիությանը որոշակի պայմաններով

Design: Zoi Environment Network

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Էկոպիտակներից առավելագույնս օգտվելը

Տեղեկատվություն արտադրողների համար

Զգուշացեք «կանաչ լվացումից»

ԵՄ շուկայի վերջին ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կայքերում ներկայացված բնապահպանական պահանջների 42%-ը չափազանցված է: Ընկերության կողմից կիրառվող բնապահպանական մեթոդների կամ որևէ ապրանքի կամ ծառայության բնապահպանական օգուտների հետ կապված սպառողներին մոլորեցնելը կոչվում է «կանաչ լվացում»: Արդյունքում սպառողները գնում են ապրանքներ, որոնք չեն տալիս այն, ինչ խոստանում են: Սա շփոթություն է առաջացնում և խաթարում է էկոպիտակների և դրանք օգտագործող ընկերությունների նկատմամբ վստահությունը:

«Կանաչ լվացումից» խուսափելու, ինչպես նաև ձեռնարկությունների և նրանց հաճախորդների միջև վստահություն ձևավորելու համար կարևոր է արտադրողներին տրամադրել ճիշտ ելակետային տեղեկատվություն՝ իրենց սեփական բնապահպանական պահանջը կազմելիս:

Ինչպես տրամադրել **ապրանքի էկոլոգիական անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն**[1]

Անհրաժեշտ է կիրառել կյանքի ցիկլի վրա հիմնված մոտեցում՝ հնարավոր և իրական սոցիալական և բնապահպանական ազդեցությունները (արդյունահանումից մինչև հեռացում) բացահայտելու համար: Ռեսուրսների խելամիտ օգտագործման պահանջները պետք է հիմնված լինեն հինգ հիմնարար սկզբունքների վրա՝

- ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ
- ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ
- ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ
- ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացի այդ, հաշվի առեք կայուն զարգացման բոլոր տնտեսական, սոցիալական և բնապահպանական ուղղությունները, ընդգծեք ձեր արտադրանքի կամ ծառայության երկարաժամկետ դրական ազդեցությունը, գտեք ձեր ուղերձը տարածելու նորարարական եղանակներ, աշխատեք գործընկերների հետ՝ ձեր նկատմամբ վստահությունը բարձրացնելու համար և օգնեք սպառողներին համեմատել ապրանքները:

[1] **Guidelines for Providing Product Sustainability Information.** United Nations Environment Programme, 2017. https://app-onet.tbf.dev/sites/default/files/from-crm/guidelines_executive_summary.pdf

Video. Guidelines for Providing Product Sustainability Information. United Nations Environment Programme, 2021. https://www.youtube.com/watch?v=wOOB-n_RUKVE.

www.eu4environment.org

© 2022 ՄԱԿ ՇՄԾ. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Արտոնվել է Եվրամիությանը որոշակի պայմաններով

Design: Zoi Environment Network

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Ինչպես ձեռք բերել **I տիպի էկոպիտակներ**

Տեղեկատվություն արտադրողների համար

Ուսումնասիրություն
I տիպի էկոպիտակներ հասանելի են ձեր նախատեսվող շուկայի համար

Ապահովեք ներդրումներ

Համապատասխանեցրեք ձեր արտադրանքը պահանջներին

Ներկայացրեք ձեր հայտը

Գովազդեք ձեր արտադրանքը և քաղեք օգուտները

Ինչպես ձեռք բերել ԵՄ էկոպիտակ և **արտահանել** ձեր արտադրանքը ԵՄ շուկա

ԵՄ էկոպիտակը I տիպի շնորհման համակարգ է, որը ղեկավարվում է Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ անդամ երկրների կողմից: Պիտակը հասանելի է 11 ապրանքային խմբերի համար՝ մաքրող միջոցներ, հագուստ և տեքստիլ, երեսպատման նյութեր, տնային պայմաններում աշխատանքի համար նախատեսված սարքեր, էլեկտրոնային սարքավորումներ, կահույք և ներքնակներ, այգեգործություն, հանգստի հարմարություններ, քսանյութեր, թուղթ, անձնական և կենդանիների խնամքի միջոցներ:

Յոթ քայլ՝ էկոպիտակ ձեռք բերելու համար

1. Դիմեք ԵՄ կամ Եվրոպական տնտեսական տարածքի այն երկրի իրավասու մարմնին, որը ԵՄ էկոպիտակի ստացման հայտերի և լիցենզիաների հարցերով պատասխանատու անկախ կազմակերպություն է, որտեղ գտնվում է կամ վաճառվելու է ձեր արտադրանքը: Իրավասու մարմինը կտրամադրի ուղեցույց հետագա քայլերի վերաբերյալ:
2. Գրանցեք ձեր ապրանքը կամ ծառայությունները ԵՄ էկոպիտակի առցանց կատալոգում (ECAT) կամ ԵՄ էկոպիտակի տուրիստական օբյեկտների կատալոգում:
3. Կազմեք գրանցման ձեր հայտն այնպես որ իրավասու մարմինը կարողանա գնահատել չափանիշների ձեր համապատասխանությունը:
4. Ներկայացրեք ձեր հայտադիմումը և վճարեք հայտի և տարեկան վճարները:
5. Սպասեք, մինչև ձեր հայտադիմումը գնահատվի:
6. Ստացեք ձեր հայտի հաստատումը և ԵՄ էկոպիտակի լիցենզիան:
7. Ներկայացրեք և գովազդեք ԵՄ էկոպիտակով ձեր ապրանքը կամ ծառայությունները:



ԵՄ էկոպիտակի **արժեքը**[1]

ԵՄ էկոպիտակի օգտագործման արժեքը կախված է ձեր ձեռնարկության գտնվելու վայրից և չափից: Վճարները ներառում են դիմումի վճարները (200-ից մինչև 2000 եվրո), տարեկան վճարները (առավելագույնը 18 750 եվրո միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև զարգացող երկների ձեռնարկությունների համար) և տեսչական ստուգման վճարները: Ապրանքները էկոպիտակի չափանիշներին համապատասխանեցնելը, ինչպես նաև լիցենզիայի փոփոխությունը կամ երկարաձգումը կարող են լրացուցիչ ծախսեր առաջացնել:

[1] **EU Ecolabel - How to apply.** European Commission, n.d. https://environment.ec.europa.eu/topics/circular-economy/eu-ecolabel-home/how-apply_en

www.eu4environment.org

© 2022 ՄԱԿ ՇՄԾ. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Արտոնվել է Եվրամիությանը որոշակի պայմաններով

Design: Zoi Environment Network

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP